ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴՈՒ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք.Ալավերդի, (0253) 2-41-00, alaverdi.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

21 ՀՈՒՆՎԱՐԻ 2021 թվականի N 13-Ա

ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ, ԱՆԱՍՆԱԳՈՄՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ, ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ, 43-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ, 5-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 18.05.2006թ. N 912-Ն որոշման 8-13-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշումով և հաշվի առնելով, որ ինքնակամ կառուցված բնակելի տունը, անասնագոմը չեն խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ, պահպանում են քաղաքաշինական նորմերը, հիմք ընդունելով Լևոն Եղիշի Թաթոյանի դիմումը, անձնագրերի պատճենները, սեփականության իրավունքի N 868288 վկայականը, «ԱԿԱ-ԳՐԱՆԻՏ» ՍՊ ընկերության կողմից կազմված հողամասի և շինության հատակագծերը, Աքորի գյուղի վարչական ղեկավարի կողմից տրված 28.12.2020թ. N 833 տեղեկանքը, քաղաքաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի առաջարկությունը ***որոշում եմ***՝

1. Լոռու մարզի Աքորի գյուղում գտնվող 0.05 հա մակերեսով /ծածկագիր՝ 06-022-002-000014/ տնամերձ հողամասին տրամադրել համայնք Ալավերդի, գյուղ Աքորի, փողոց 7, նրբանցք 2, N 6 փոստային հասցե:
2. Օրինականացնել համայնք Ալավերդի, գյուղ Աքորի, փողոց 7, նրբանցք 2, N 6 հասցեում գտնվող, Լևոն Եղիշի Թաթոյանին (ծնված՝ 10.01.1950թ.), Անահիտ Փիրուզի Թաթոյանին (ծնված՝ 16.05.1956թ.), Ռոմիկ Լևոնի Թաթոյանին (ծնված՝ 19.06.1977թ.), Ժաննա Լևոնի Թաթոյանին (ծնված՝ 15.12.1973թ.), Անուշ Լևոնի Թաթոյանին (ծնված՝ 02.04.1975թ.) համասեփականության իրավունքով

պատկանող, 0.05 հա մակերեսով բնակելի կառուցապատման հողամասում 2012թ. ինքնակամ կառուցված, 49.11 քմ արտաքին մակերեսով (38.1 քմ ներքին մակերեսով) բնակելի տունը, 29.76 քմ արտաքին մակերեսով (19.8 քմ ներքին մակերեսով) անասնագոմը:

3. Օրինականացված բնակելի տան, անասնագոմի համար սահմանված ընդհանուր՝ 46207 (քառասունվեց հազար երկու հարյուր յոթ) դրամ արժեքով վճարը սահմանված ժամկետում չվճարելու դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած:
4. Հողամասն ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի՝ 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում:
5. Նշված իրավունքը ենթակա է պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՍԱՍՈՒՆ ԽԵՉՈՒՄՅԱՆ**

2021թ. հունվարի 21
ք. Ալավերդի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴՈՒ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք.Ալավերդի, (0253) 2-41-00, alaverdi.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

21 ՀՈՒՆՎԱՐԻ 2021 թվականի N 14-Ա

ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ՛ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԱՎՏՈԼՎԱՑՄԱՆ ԿԵՏՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ, ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԱՆԱՎԱՐՏ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ՆՇԱԳԾՎԱԾ ՏԱՐԲԵՐԱԿՈՎ ԳՐԱՆՑԵԼՈՒ, ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ, 43-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ, 5-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 18.05.2006թ. N 912-Ն որոշման 8-13-րդ, 16-րդ, 33.1-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշումով, և հաշվի առնելով, որ ինքնակամ կառուցված ավտոլվացման կետը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ, պահպանում է քաղաքաշինական նորմերը, հիմք ընդունելով Գագիկ Լևոնի Էվոյանի դիմումը, հողամասի սեփականության իրավունքի N 1447108 վկայականը, «ԱԿԱ-ԳՐԱՆԻՏ» ՍՊ ընկերության կողմից կազմված հողամասի և շինության հատակագծերը, ժառանգության իրավունքի վկայագիրը, Հաղպատ գյուղի վարչական ղեկավարի կողմից տրված 16.06.2020թ. N 340 տեղեկանքը, քաղաքաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի առաջարկությունը ***որոշում եմ***՝

1. Լոռու մարզի Հաղպատ համայնքում գտնվող 0.3679 հա մակերեսով /ծածկագիր՝ 06-060-0037-0004/ տնամերձ հողամասին տրամադրել համայնք Ալավերդի, գյուղ Հաղպատ, փողոց 11, N 42 փոստային հասցե:
2. Օրինականացնել համայնք Ալավերդի, գյուղ Հաղպատ, փողոց 11, N 42 հասցեում գտնվող, Գագիկ Լևոնի Էվոյանին սեփականության իրավունքով պատկանող, 0.3679 հա մակերեսով բնակելի կառուցապատման հողամասում 2020թ. ինքնակամ

կառուցված, 44.87 արտաքին մակերեսով (41.4 քմ ներքին մակերեսով) ավտոլվացման կետը:

3. Օրինականացված ավտոլվացման կետի համար սահմանված՝ 49357 (քառաքսունինը հազար երեք հարյուր հիսունյոթ) դրամ արժեքով վճարը սահմանված ժամկետում չվճարելու դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած:
4. Հողամասում առկա է ինքնակամ կառուցված 131.67 քմ արտաքին մակերեսով (105.0 ներքին մակերեսով) անավարտ շինություն, որը ենթակա է գրանցման նշագծված տարբերակով, որպես ինքնակամ կառույց:
5. Հողամասն ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում:
6. Նշված իրավունքը ենթակա է պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՍԱՍՈՒՆ ԽԵՉՈՒՄՅԱՆ**

2021թ. հունվարի 21
ք. Ալավերդի